



ԴՈՒՔ ՀԱՇՄԱՆԴԱ՞Մ ԵՔ ԵՎ ՉԵՔ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԱՇԽԱՏԵԼ:



ԴՈՒՔ ԻՐԱՎԱՍՈ՞Ւ ԵՔ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՐՎՄԱՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՐՎԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ:

Սոցիալական ապահովման հաշմանդամության ապահովագրման (SSDI) ծրագիրը տրամադրում է երկարատև նպաստներ այն մարդկանց, ովքեր համապատասխանում են մշտական (մեկ տարուց ավել) հաշմանդամության (ոչ կարճաժամկետ հաշմանդամության) սահմանմանը՝ հաստատված Սոցիալական ապահովման կողմից:

*Կարճաժամկետ հաշմանդամություն ունենալու դեպքում ծանոթացեք City of Hope-ի հաշմանդամության պետական ապահովագրման գրքուկին



Եթե դուք անաշխատունակ եք եղել վեց ամսից երկար ժամկետով, դուք կարող եք իրավասու լինել SSDI ծրագրի համար:

Դուք կարող եք իրավասու լինել նպաստների համար, եթե դուք.

- Ունեցել եք Սոցիալական ապահովման կողմից աջակցվող աշխատանք:
- Հաշմանդամ դառնալու պահին ունեցել եք բավարար աշխատանքային կրեդիտներ իրավասու լինելու համար՝ ձեր տարիքի և աշխատանքային ստաժի հիման վրա: (2019 թ-ին դուք վաստակել եք մեկ կրեդիտ յուրաքանչյուր \$1,360 աշխատավարձի համար կամ ինքնազբաղվածության գործունեությամբ զբաղվելու եկամտի համար):
- Ընդհանուր առմամբ, ձեզ անհրաժեշտ է 40 կրեդիտ, որոնց 20 պետք է վաստակված լինեք վերջի 10 տարիների ընթացքում, մինչև այն տարին, երբ դարձել եք հաշմանդամ: Այնուամենայնիվ, երիտասարդ աշխատողները կարող են իրավասու լինել ավելի քիչ կրեդիտների առկայության դեպքում: Մանրամասն տեղեկությունների համար այցելեք ssa.gov/planners/credits.html կայք:
- Այնպիսի առողջական վիճակում եք, որը համապատասխանում է Սոցիալական ապահովման կողմից հաստատված ամբողջական հաշմանդամության սահմանմանը (նպաստները չեն վճարվում մասնակի կամ կարճաժամկետ հաշմանդամության դեպքում):
 - Ձեր առողջական վիճակն առնվազն 12 ամիս է, ինչ սահմանափակում է հիմնական աշխատանքներ կատարելու ձեր հնարավորությունը, ինչպես օրինակ՝ ինչ-որ բան բարձրացնելը, կանգնելը, քայլելը, նստելը և հիշելը:
 - Ձեր առողջական վիճակը թույլ չի տալիս կատարել աշխատանքին առնչվող հիմնական գործունեությունները:
 - Ձեր առողջական վիճակի պատճառով դուք չեք կարող հարմարվել այլ աշխատանքի հետ և չեք կարողանում կատարել նախկինում կատարած աշխատանքը:
- Առողջական վիճակի պատճառով դուք առնվազն մեկ տարի է կամ ավել, ինչ ի վիճակի չեք աշխատելու:
 - Նպաստները սովորաբար շարունակվում են մինչև դուք կրկին աշխատունակ լինեք և աշխատեք կանոնավոր կերպով:
 - Եթե դուք Սոցիալական ապահովման հաշմանդամության նպաստները ստանում եք, երբ հասել եք թոշակի գնալու տարիքին, ձեր հաշմանդամության նպաստները ավտոմատ կերպով փոխարկվում են թոշակի նպաստների, սակայն գումարը մնում է նույնը:

Մանրամասն տեղեկությունների համար այցելեք ssa.gov/planners/retire/retirechart.html:

Մանրամասն տեղեկություններ SSDI նպաստների մասին. SSDI նպաստների մասին մանրամասն տեղեկությունների համար այցելեք ssa.gov/planners/disability/index.html



Քաղաքացիություն չունեցող բնակիչները նույնպես կարող են իրավասու լինել, եթե նրանք համապատասխանեն լրացուցիչ պահանջներին:

- SSDI-ի համար քաղաքացիություն չունեցող բոլոր բնակիչները պետք է համապատասխանեն հետևյալ հիմնական պահանջներին.
 - Նրանք պետք է ունենան Սոցիալական ապահովման համար, որը տրվել է նրանց 2004 թ-ի հունվարի 1-ին կամ դրանից հետո, ինչը նրանց իրավունք է տալիս աշխատելու ԱՄՆ-ում, ԿԱՄ
 - Նրանք պետք է ունենան ոչ ներգաղթային այցագիր՝ B-1, D-1 կամ D-2, ԵՎ
 - Նրանք պետք է կարողանան ապացուցել, որ օրինական կերպով են գտնվելու ԱՄՆ-ում ամեն մի վերցրած ամիսը, որի համար պետք է վճարվեն SSDI ծրագրի նպաստները, ԵՎ
 - Նրանք պետք է համապատասխանեն իրավասության մնացած բոլոր չափանիշներին (տեխնիկական և բժշկական), որպեսզի կարողանան ստանալ SSDI նպաստները:
- Կարևոր է նշել, որ մինչ որոշ քաղաքացիություն-չունեցող բոլոր բնակիչները պետք է համապատասխանեն իրավասության բոլոր չափանիշներին՝ SSDI նպաստները ստանալու համար, շատերի համար դա կարող է պարտադիր չլինել : Նույնիսկ, եթե մարդը օրինական կերպով է գտնվում ԱՄՆ-ում և Սոցիալական ապահովման վարչության կողմից թույլտվություն ունի աշխատելու, քաղաքացիություն չունեցող շատ ուսանողներ և այլ աշխատողներ ազատված են Սոցիալական ապահովման հարկերի վճարումներից:
- Այս քաղաքացիություն չունեցող անձանց աշխատանքի ընթացքում SSDI ծրագրի ֆոնդում ներդրումներ չունենալու փաստը նրանց զրկում է հաշմանդամության նպաստներ ստանալու իրավունքից, քանի որ նրանք չեն համապատասխանում SSDI-ի իրավասության համար պահանջվող հիմնական տեխնիկական չափանիշին:



Հինչպես դիմել

Եթե դուք պատրաստ եք դիմելու հիմա, ապա կարող եք.

1. Լրացրեք առցանց դիմումը հետևյալ հասցեով ssa.gov/applyfordisability/

Կարող եք նաև դիմել Սոցիալական ապահովման հայտերի գործընթացի վերաբերյալ տեսանյութը, որը կարող եք գտնել այստեղ <https://bit.ly/2cE08TC>

2. Զանգահարեք անվճար հեռախոսահամարով՝ 800-772-1213: Եթե դուք չեք լսում կամ լսողական խնդիրներ ունեք, կարող եք զանգահարել մեզ TTY 1-800-325-0778 հեռախոսահամարով:

3. Զանգահարեք կամ այցելեք ձեր Սոցիալական ապահովման գրասենյակ:



Եթե հարցեր կամ մտահոգություններ ունեք, դիմեք Կլինիկական սոցիալական աշխատանքի գրասենյակ 626-218-2282 հեռախոսահամարով կամ այցելեք մեզ երկուշաբթիից ուրբաթ, ժ. 8:30 - 17:00, Հիմնական բժշկական շենք, դեղատնից սրահով դեպի ներքև:



SSDI-ի խորհրդատվության հետ կապված իրավական հարցերի և ռեսուրսների և ապահովագրման ու զբաղվածության հետ կապված այլ մտահոգությունների դեպքում կապվեք Քաղցկեղի իրավաբանական ռեսուրսների կենտրոն հետևյալ հասցեով [CancerLegalResourceCenter.org](https://www.cancerlegalresourcecenter.org) կամ զանգահարեք 866-THE-CLRC կամ 866-843-2572 հեռախոսահամարներով:

City of Hope-ը չի կարող իրավական խորհրդատվություն տրամադրել:

Division of Clinical Social Work
Patient, Family and Community Education
Department of Supportive Care Medicine
[CityofHope.org/ClinicalSocialWork](https://www.cityofhope.org/ClinicalSocialWork)
[CityofHope.org/PatientandFamilyEducation](https://www.cityofhope.org/PatientandFamilyEducation)
2020



[CityofHope.org](https://www.cityofhope.org)